## Տ Ա Ր Ե Կ Ա Ն   Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2025 թ. գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին**

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2025 թ. գործունեության կարևորագույն արդյունքներից են՝ «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3»** գիտական թեմայի /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/ շրջանակներում՝

**ա.** Շարունակվեցին պեղումները Ջրաձորի բրոնզ-երկաթեդարյան ամրոց-բնակավայրի տարածքում: Հայտնաբերված նյութը փաստում է ամրոցի պաշտպանական համակարգի բազմակի վերակառուցման մասին: Զարգացած միջնադարում այն միանշանակ վերաօգտագործվել է. պատաշարերում հայտնաբերվեցին բյուզանդական անանուն ֆոլիս խաչապատկերավոր քարեր, միջնադարյան ջնարակված խեցեղեն, թոնիրների մնացորդներ և այլն: Ուրարտական տաճարի գոյությունը և միջնադարյան վերաօգտագործման հստակ հետքերը ցույց են տալիս, որ այստեղ սերտորեն միահյուսված են եղել պաշտամունքային, վարչական և ռազմական գործառույթները: Այդ պատճառով Ջրաձորը կարելի է բնութագրել որպես տարածաշրջանային իշխանության վերահսկման հիմնակետ, որտեղ ռազմական և տնտեսական համակարգերը համադրվում են Արարատյան դաշտից հյուսիս ձգվող հաղորդակցական ուղիների վրա:

բ. 2025 թ. Շիրակի մարզի Ջրաձոր գյուղի հարավային հատվածում, Ախուրյան գետի աջ ափին, հետազոտվեցին Կապսի ջրամբարի կառուցման ընթացքում հայտնաբերված նորահայտ № 1 և № 2 քարայրները: Քարայր № 1-ում հնագիտական մշակութային շերտ չհայտնաբերվեց: Քարայր № 2-ի ներսում դրվեց 3×3 մ քառակուսիներով բաժանված պեղավայր և իրականացվեց շերտ առ շերտ պեղում՝ շերտագրության մանրամասն փաստմամբ, գտածոների in situ փաստաթուղթավորմամբ և լուսանկարահանումով: Հայտնաբերվեց 101 խեցաբեկոր, այդ թվում՝ գետնաթաղ կարասի բեկորներ, ալիքազարդ և ջնարակված անոթների մասեր, ինչպես նաև կարասի մեջ պահպանված կենդանական ոսկորների մնացորդներ: Պեղված նյութը փաստում է կառույցի բնակեցման և տնտեսական օգտագործման ուղիները և հնարավորություն տալիս այն դիտարկել Ջրաձորի ամրոցի միջնադարյան վերաօգտագործման փուլերի համատեքստում:

**գ**. Կատարվեց Հերոդոտոսի աշխատության մեջ հիշատակվող Արևելքի Պակտյուիկե-Բակտրիա-Արևմուտքի Պակտյուիկե երկրանունների համեմատական վերլուծություն: Հատուկ անունների ստուգաբանությամբ պարզվեց, որ Արևելքի Պակտյուիկե անունը ծագում է սանսկրիտի paktha «հինգ» բառից, իսկ Բակտրիայի անունը՝ իր կրկնորդ zari-aspa-ի նման «ձիական» բնույթ ունի: Ինչ վերաբերում է Արևմուտքի կամ Հայկական Պակտյուիկեին, ապա սա տեղական՝ հայկական տեղանուն չէ: Նրա հիմքում ծագումով հնդեվրոպական *pakt- «համաձայնություն, դաշինք» բառն է և Urartu դաշնային պետության անվան համարժեքն է:

**2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2025թ.**

**ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2025թ. շարունակել է իրականացնել «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտահետազոտական ծրագիրը /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/:**

**Հնագիտության գծով –** 2025 թ. հնագիտական հետախուզություններ են իրականացվել Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի շրջաններում՝ Ախուրյան գետի վերին հոսանքի

շրջանում, Արփա լճի ավազանում, Աչքասարի հարավային, արևմտյան և հարավարևելյան լանջերին, Բավրայի դաշտում, ինչպես նաև Յարթաշեն–Տաշիր ավտոճանապարհի երկայնքով: Նոր հուշարձանախմբեր են հայտնաբերվել Սարագյուղի հատվածում, ինչպես նաև Արագած լեռան բարձրլեռնային գոտում: Գերմանիայի Յնագիտական ինստիտուտի հետ համագործակցությամբ, ռադիոածխածնային թվագրման են ուղարկվել Ջրաձորի ուշուրարտական տաճարական համալիրի հատակի տակից վերցված կենդանական ոսկորների չորս նմուշներ: Ռադիոածխածնային տվյալների ստացումից հետո նախատեսվում է անցնել ամփոփիչ գիտական հոդվածի պատրաստմանը:

**Պատմագիտության գծով –** հատուկ անունների ստուգաբանությամբ ապացուցվել է, որ շումերներն ունեցել են Կենաց և Իմացության ծառերի զույգի մասին իրենց պատկերացումները, իսկ նրանց «աստվածների պարտեզը» և «մաքուր Եփրատը» մատնացույց են անում շումերական դրախտի՝ Յայկական լեռնաշխարհում գտնվելու հանգամանքը: Կենաց և Իմացության ծառերի նախատիպերը Յայկական լեռնաշխարհի սաղարթախիտ ու երկարակյաց ծառերն են՝ բարդի, կաղամախի և այլն: Յայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել այլ «Դրախտներ» ևս: Օրինակ՝ «Արարատյան դրախտը»՝ հետագայի Արագածոտն գավառը: Այժմյան Աշտարակ քաղաքին մերձակա Ուշի և Կարբի (կարբ՝ «կաղամախի») գյուղերի անունները պահպանել են տեղական դրախտի զույգ ծառերի հիշատակը: Կատարվել է Պատմական Տայքի ժողովրդագրական իրավիճակը ներկայացնող XVII դ. օսմանյան նոր հարկամատյանի հանգամանալի քննություն: Շարունակվել է XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի շիրակցի հայտնի կաթոլիկ գործիչների հասարակական-մշակութային և հրատարակչական գործունեության ուսումնասիրությունը: Անդրադարձ է կատարվել Աղեքսանդր վարդապետ Արարատյանի և 1919-1920թթ. «Բազմավեպ» հանդեսի խմբագիր Գաբրիել վարդապետ Նահապետյանի գրական գործունեությանը: Շարունակվել է աշխատանքը Ալեքսանդրապոլի գավառի XIX դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության ուղղությամբ: Կատարվել է Յայաստանի առաջին հանրապետության կրթական քաղաքականության համակողմանի վերլուծություն:

**Ազգագրության գծով –** առանձին քննության առարկա է դարձել Շիրակի գործվածքի մշակույթը: Ուսումնասիրվել են ոստայնանկության մեջ մտնող բոլոր արհեստները: Առաջին անգամ գործվածքը դիտարկվել է նաև որպես ոչ նյութական մշակույթի կրող: Շարունակվել է Գյումրու երգիծական բանավոր ժառանգության քննությունը: Ուսումնասիրվել են Յարավային Կովկասում XIXդ. վերջին և XXդ. սկզբին ընթացող էթնոժողովրդագրական գործընթացները, վեր են հանվել ազգաբնակչության էթնիկ կազմի փոփոխության շարժառիթները, դրդապատճառները, ինչպես նաև Ցարական Ռուսաստանի ազգային քաղաքականության իրականացման հետևանքները:

**Բանագիտության գծով –** պարերգերի հետ համադրմամբ շարունակվել է բանահյուսական օրորոցային երգի քննությունը: Անդրադարձ է կատարվել խաղիկներում հագուստի նկարագրությանը, որովհետև հագուստը ոչ միայն ներկայացնում է քնարական հերոսի արտաքին տեսքը, այլև փոխանցում է սոցիալական դիրքը, երբեմն՝ սյուժեի պատկերավորությունը: Շարունակվել է 1850-1920 թթ. հայ պարբերական մամուլից Շիրակի բանահյուսական մշակույթին առնչվող նյութերի հայտնաբերումն ու դասակարգումը:

**Արվեստագիտության գծով –** Կատարվել է Շիրակի տարածաշրջանի խորհրդային տարիների գեղջկական և քաղաքային ժողովրդական երգերի տիպաբանական քննություն, ինչպես նաև ի մի է բերվել և մշակել խորհրդային շրջանի Շիրակի ժողովրդական երգերի հավաքածուն: Ուսումնասիրվել է Անիի միջնաբերդի կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցին, որի կառուցվածքում պարզվել են Բագրատունիների և Զաքարյանների շրջափուլերին համապատասխան շերտավոր կառուցապատումներ: Ճարտարապետական ձևերի, շինարարական տեխնիկայի ու վարպետների նշանների համադրական վերլուծությունը հնարավորություն է տվել ճշգրիտ սահմանել եկեղեցու կառուցապատման փուլերը: Զուգահեռ իրականացված հայկական ավանդական բնակելի տների ճարտարա-

պետա-ազգագրական քննությունը հնարավորություն է տվել վերանայել «օդա» տերմինի ստուգաբանությունն ու գործառույթը:

2025-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում հրատարակվել են «Գիտական աշխատություններ» պարբերականի 28-րդ հատորի 1-ին (226 էջ) և 2-րդ (300 էջ) պրակները, «Գործվածքի մշակույթը Շիրակում (19-20-րդ դդ)» (288 էջ), «Childbearing and Childrearing Traditions of the Shirak Region of Armenia» (192 էջ), և «Megalithic Culture Of Artsakh» (159 էջ) խորագրերով մենագրությունները, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն (376 էջ), «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ-1» հոդվածների ժողովածուն (200 էջ), 69 գիտական հոդվածներ (17-ը՝ արտերկրում) և գիտաժողովների 74 զեկուցումներ (11-ը՝ արտերկրում): Իրականացվել են՝ Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ միջազգային գիտաժողովը (89 մասնակից, 21-ը՝ արտերկրից), «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ» հանրապետական 5-րդ գիտաժողովը (17 մասնակից), «Երիտասարդ հնագետների երրորդ միջազգային ամառային դպրոցը» (25 մասնակից, 11-ը՝ արտերկրից), կազմակերպվել են 4 հնավայրերի պեղումներ, ազգագրական 11 գիտարշավներ և 22 սեմինարներ: Կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ հաշվետու տարում գործել են ֆեյսբուքյան էջը, համացանցում տեղադրված Կենտրոնի եռալեզու կայք-էջը /www.shirakcenter.sci.am/ և ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» պարբերականի երկլեզվյա կայք-էջը /www.shiraksciworks.sci.am/:

**ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

**Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ա. Ակոպով**

**3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2025թ.**

Հաշվետու տարում ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ «**Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային** (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական թեմաների մրցույթի արդյունքներով կենտրոնում իրականացվել են 3 թեմաներ՝ ա. *«Տայքը XII-XVII դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)»*, «Հայ ավանդական երաժշտությունը XX դ. պատմամշակութային համատեքստում», «Կարս-Շիրակ տարածաշրջանի բանահյուսական ժառանգությունը»:

**ա. *«Տայքը XII-XVII դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)»* (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Ակոպով)** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման առաջին տարում կազմակերպվել է գիտական արշավախումբ դեպի Տայքի Բողխա և Պարտիզացփոր գավառներ (Թուրքիա), որտեղ փաստագրվել, լուսանկարվել և պատմաճարտարապետական քննության են ենթարկվել առաքելական և քաղկեդոնիկ հայերի ստեղծած հայտնի և անհայտ շուրջ 100 պատմամշակութային հուշարձաններ՝ բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, կամուրջներ, վիմագիր հուշարձաններ, քաղաքացիական նշանակության շինություններ և այլն: Թեմայի անդամները զեկուցումներով հանդես են եկել մի շարք միջազգային գիտաժողովներում Հայաստանում և արտերկրում: Կատարված աշխատանքներն ամփոփվել են գիտական 6 հոդվածներով (այդ թվում մեկը՝ SJR Q1 quartile-ում ընդգրկված արտասահմանյան պարբերականում), միջազգային գիտաժողովների 6 զեկուցմամբ և գիտական մի քանի սեմինարներով: Հրատարակության

է նախապատրաստվում ՏԱՅՔ. Պատմաճարտարապետական ուսումնասիրություն: Մաս Գ (Ոքաղե և Բողխա)» կոլեկտիվ մենագրությունը:

**բ. «Հայ ավանդական երաժշտությունը XX դ. պատմամշակութային համատեքստում» (ղեկ.՝ արվեստագիտ.թ. Հ. Հարությունյան)** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում հաշվետու տարում սկսվել է XX դարասկզբին հրատարակված հայ ժողովրդական և աշուղական երգերի ժողովածուների համակարգման աշխատանքը: Երգերի ժանրային դասակարգման սկզբունքով դիտարկվել է շուրջ 50 երգարան: Կատարող խումբը թեմայի խորհրդատու՝ Վիեննայի Երաժշտության և կատարողական արվեստների համալսարանի պրոֆեսոր Ուլրիխ Մորգենշտերնի հետ համատեղ աշխատել է նաև հայկական ավանդական պարկապզուկ նվագարանի պատմատեսական և մշակութաբանական խնդիրների շուրջ: Ընթանում են նաև XX դարասկզբի մուղամի արվեստին առնչվող ձեռագիր, տպագիր, ձայնագիր նյութերի հավաքման և համակարգման աշխատանքներ: Հրատարակվել է գիտական մեկ հոդված արտերկրում:

**գ.** «**Կարս-Շիրակ տարածաշրջանի բանահյուսական ժառանգությունը**» **(ղեկ. բան. գիտ. թեկն. Հ. Մատիկյան)** թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման առաջին տարում խմբի անդամների ուսումնասիրության տիրույթում են եղել վիպական բանահյուսությունը, քնարական բանահյուսությունը՝ Կարս-Շիրակ տարածաշրջանների համեմատական քննությամբ: Հաշվետու տարում թեմայի ղեկավարն ու անդամները մասնակցել են 6 միջազգային գիտաժողովների և հրատարակել է գիտական 5 հոդված:

**ՇՀՀ կենտրոնի տնօրեն պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

**Գիտքարտուղար պ.գ.թ. Ա. Ակոպով**

**4. –**

**5. 2025 թ. հրապարակումների ցանկ**

**Մենագրություններ, ժողովածուներ**

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ›› հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., h. 1 (28), 2025, 226 էջ:
2. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ›› հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., h. 2 (28), 2025, 300 էջ:
3. «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր», 12-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., 2025, 376 էջ:
4. Բազեյան Կ.Ռ., Գործվածքի մշակույթը Շիրակում (19-20-րդ դդ.), Ե., 2025, 288 էջ:
5. «Հայագիտական ընթերցումներ. Ազգագրություն և բանագիտություն» գիտական հոդվածների ժողովածու, Գյումրի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ հրատ., մաս 1, 2025, 200 էջ:
6. Matikyan H., Childbearing and Childrearing Traditions of the Shirak Region of Armenia, Y., 2025, 192 p.
7. Avetisyan H., Gnuni A., Sargsyan G., Mkrtchyan L., Bobokhyan A., Megalithic Culture Of Artsakh, Y., Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, 2025, 159 p.

**Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ**

1. **Ալեքսանյան Կ.Վ.,** Գրքիկյան Լ.Ս., Հայաստանի Հանրապետության առաջին քաղաքական ճգնաժամը (1992թ.), Kraków, International independent scientific journa, l N79/2025, p. 17-22.
2. **Ալեքսանյան Կ.Վ.,** Պողոսյան Ա.Ռ., Հայաստանի Հանրապետության կառավարության կրթական բարեփոխումների քաղաքականության իրականացումն Ալեքսանդրապոլում (1918-1920թթ.), Москва, «Интернаука», научный журнал, № 41(405), Часть 4, 2025, с. 17-21.
3. Այվազյան Գ.Ս., Աստվածաշնչյան նախատիպերը հայ ազատագրական գործիչների կերպարներում (XVII-XVIIIդդ.), Москва, «Интернаука», научный журнал, № 45 (404), Часть 3. 2025, с. 92-98.
4. Այվազյան Գ.Ս., Շիրակը և Անին Ղևոնդ Ալիշանի բանաստեղծական աշխարհում, Москва, «Интернаука», научный журнал, № 40(404), Часть 3. 2025, с. 89-92.
5. Բազեյան Կ.Ռ., Ազգագրության հանրայնացման առանձնահատկությունները ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում, Ե., «Գիտություն. Հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում (հոդվածների ժողովածու)», 2025, էջ 182-187:
6. **Բազեյան Կ.Ռ.**, Աղանյան Գ.Թ., Արևմտահայերի ազգային սահմանադրությունը և հայոց ազգային ինքնության վերածննդի արտացոլումը ժողովրդական արվեստում (ըստ թանգարանային հավաքածուների), Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, № 2(16), 2025, էջ 107-117:
7. **Բոյաջյան Ա.Գ.**, Ավետիսյան Ռ.Գ., Կրթական գործընթացները Շիրակի պետական համալսարանում (1934-2024թթ.), Գյումրի, Շիրակի Մ. Մալքանդյանի անվան պետական համալսարանի, «Գիտական տեղեկագիր», Պրակ Բ, № 1, 2025, էջ 245-259:
8. Բոյաջյան Ա.Գ., Էթնոժողովրդագրական գործընթացները Հարավային Կովկասում ըստ վարչատարածքային միավորների (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ. Գյումրի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի, «Գիտական տեղեկագիր», Պրակ Ա, № 1, 2025, էջ 62-66:
9. Դալալյան Տ.Ս, **Գալստյան Հ.Հ.,** Վարդանյան Ն.Խ., Պարի ծիսական և բանահյուսական ենթատեքստը, Ե., «Լրաբեր հասարակական գիտություններիր», N 1(673), 2025, էջ 298-305:
10. Մատիկյան Հ.Հ., Հարությունյան Հ.Հ, Օրորոցային երգի ժանրային բազմազանության դրսևորումներից մեկի մասին, Գյումրի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Պրակ Բ, № 1, 2025, էջ 161-171:
11. Մկրտչյան Լ.Ա., Մաստարայի լեռնահովտի երկաթեդարյան համալիրը Կարմրաշենի սարավանդի մշակութային լանդշաֆտի համակարգում, Ե., «Պատմություն և մշակույթ», հ. SI-1, 2025, էջ 209-216:
12. **Նահատակյան Դ.Ս., Նուրբեկյան Գ.Վ.,** Ալեքսանյան Ա.Ա., Տեղ գյուղի մելիքական ապարանքի ճարտարապետական վերլուծությունը և առաջարկվող վերականգնման տարբերակը, Ե., ՃՇՀԱՀ «Գիտական աշխատություններ», 3(93), 2025, էջ 36-46:
13. Սահակյան Կ.Ա., Գյումրին երազում և արթուն (Էքստրեմալ իրավիճակի երազներ ու տեսիլներ, 1988թ.), Ե., «Ակտուալ արվեստ», 22(28), 2025, էջ 73-76:
14. **Авагян И.Э.,** Оганнисян А.Г., Оганнисян Г.А., Архивные материалы по банковскому делу города Александрополя в начале XX в., Грозный, Гуманитарное знание и духовная безопас-

ность, Сборник материалов XII Международной научно-практической конференции, 2025, с. 10-16.
15. **Бояджян А.Г.**, Амбарцумян К.Р., Майтесян Г.Ш., Влияние этнического фактора на политические процессы в Баку 1917 г., Элиста, Oriental Studies, Vol. 18, Is. 1, 2025, p. 100-118. https://doi.org/10.22162/2619-0990-2025-77-1-100-118
16. Петросян Л.С., Культ зерновых в области Армении Ширак, Петрозаводск, Сборник статей III Международной научно-практической конференции, МЦНП «НОВАЯ НАУКА», 2025, с. 184-188.
17. Akopov A., Hayrapetyan A., Hayrapetyan S., Tayk in the 16th-17th centuries: Demographic and Religious transformation of the Armenian Population. Ness Ziona, Israel, Proceedings in Archaeology and History of Ancient and Medieval Black Sea Region, N 19, 2025, p. 555-566.
18. Bazeyan K., The process of shaping new urban culture in Leninakan during the early soviet period, Makhachkala, History, Archeology and Ethnography of the Caucasus, V. 21, No 4, 2025, p. 110-126.
19. Cherepennikov Yu, Margaryan V., Shahverdyan A., Kocharyan V., Trouni K., **Mkrtchyan L.,** Simonyan H., X-ray tomography and spectroscopy applications for revealing ancient metalworking techniques, Nuclear Instruments and Methods in Physics Research Section A: Asselerators, Spectrometers, Detectors and Associated Equipment, vol. 1075, 2025, 1-8 pp. https://doi.org/10.1016/j.nima.2025.170359
20. **Galstyan H.,** Cholakian H., Shvot and Ishvut: A Comparative Analysis of Armenian Lower Mythological Characters, History, Archaeology and Ethnography of the Caucasus, N 21/3, 2025, p. 608-617. DOI: https://doi.org/10.32653/CH213608-617
21. Galstyan H., Folklore of Armenians in Baku: Cultural Memory and Identity, The Armenian Religious, Y., Cultural and Civilizational Heritage of Baku, 2025, p. 120-125.
22. Harutyunyan H., Traditional music in the metamorphoses of 20th-century culture. Florence, “Annali d’Italia” №72, 2025, p. 32-37.
23. Harutyunyan H., Folk song as an ethnocultural phenomenon. Bratislava, Slovak international scientific journal, № 93. 2025, p. 24-28.
24. **Harutyunyan H.,** Hayrapetyan H., Asatryan A. Armenian folk song in the records of the beginning of the 20th century. «Sciences of Europe» №162, Praha, 2025
25. **Harutyunyan H.,** Music in the urban culture of Baku armenians, Y., “The Armenian religious and cultural heritage of Baku”, 2025, p. 126-136.
26. Hayrapetyan A., The Armenian Massacres in Alexandrapol District from May to November 1918: A Little-Studied Episode from The History of The Armenian Genocide, Armenological Studies, Y., Armenian Folia Anglistika, vol. 21, Issue 1(31), 2025, p. 193-206.
27. Kumunts M., **Galstyan H.**, The Evil Spirit Kajk in the Context of Lower Armenian Mythology, Religious Enquiries, vol. 14, issue 2, 2025, p. 52-74.
28. Reinhold S., Vardanyan B., Saribekyan M., Mariaschk D., Simonyan H., Zarikyan N., Ein gutes Omen? Zu einem Grab mit Bezug zu Divinations Praktiken der Spätbronzezeit aus Lernakert am Nordhang des Aragats Massivs. Halle (Saale), Archäologie in Armenien III. Berichte zu den Kooperationsprojekten sowie ausgewählte Einzelstudien, 2025, p. 15-40.
29. Sahakyan K., Hovhannisyan R., Cemeteries as cultural archives: The memory of disaster after the 1988 earthquake, Armenia. Miami, Intern. Journal of Profess. Bus. Review. 2025, vol. 1n.10, p. 1-15. https://doi.org/10.26668/businessreview/2025.v10i10.5734

**Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., հ. 1 (28), 2025, 226 էջ:**

1. Բազեյան Կ.Ռ., 1926 թ. երկրաշարժը և արդյունաբերական Լենինականի կառուցումը, էջ 154-165:
2. Գալստյան Հ.Հ., Բանահյուսական մեծարժեք ժողովածու, Գրախոսություն «Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը» գրքի, էջ 218-220:
3. Հարությունյան Հ.Հ., Մատիկյան Հ.Հ., Շիրակյան պարերգերը փոփոխվող միջավայրի համատեքստում, էջ 85-95:
4. Մատիկյան Հ.Հ., Հազարան բլբուլը որպես հրաշագործ կերպար, էջ 106-114:
5. Պետրոսյան Ս.Գ., Պետրոսյան Լ.Ս., Դրախտային ծառերի զույգի, խաղողի որթի և դրանց պահապանների մասին, էջ 72-84:

**Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., հ. 2 (28), 2025, 299 էջ:**

1. Ակոպով Ա.Ա, Հայրապետյան Ա.Ս., Ժողովրդագրական պատկերի դիմախեղումը Տայքում 16-17-րդ դարերում (Թորթումի գավառի օրինակով), էջ 30-44:
2. Խեմչյան Է.Հ., Կարս-շիրակյան տարածաշրջանի մականունները և դրանց բնութագրիչները, էջ 167-176:
3. Հայրապետյան Ա.Ս., Ադամյան Ն.Ս., Դրվագներ բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների համագործակցության պատմությունից, էջ 66-79:
4. Հայրապետյան Ս.Ա., Գիտական լրատու, էջ 282-295:
5. Մատիկյան Հ.Հ., Հարությունյան Հ.Հ., Շիրակյան խաղիկների որոշ առանձնահատկություններ, էջ 143-152:
6. Նահատակյան Դ.Ս., Նոր դիտարկումներ Անիի միջնաբերդի կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցու ճարտարապետության շուրջ, էջ 205-213:
7. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Հիշողությունը և տրավման տապանագրային ու սգերգային ժառանգության համատեքստում, էջ 112-123:
8. Авагян И.Э., Архивные докумены о развитии уличного освещении города Александрополя в 1894-1895 гг., с. 45-53.
9. Khemchyan M., Manifestations of ATU 707 Type in the Tales of Magic of Kars-Shirak Region, p. 124-132.

**Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Հայագիտական ընթերցումներ. Ազգագրություն և բանագիտություն» գիտական հոդվածների ժողովածուում, մաս 1, Գյումրի, ՇՀՀԿ հրատ., մաս 1, 2025, 200 էջ:**

1. Բազեյան Կ.Ռ., Ասեղնագործությունը հայոց առաջնային արտադրության մշակույթում (18-20-րդ դարասկիզբ), էջ 47-74:

2. Բոյաջյան Ա.Գ., Էթնոժողովրդագրական գործընթացները Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի գավառներում 1886-1916թթ., էջ 75-93:
3. Խեմչյան Է.Հ., Առաջավորասիական պատմավիպական կերպարները Կարս-շիրակյան տարածաշրջանում, էջ 150-164:
4. Խեմչյան Մ.Հ., Կարս-շիրակյան տարածաշրջանի բանահյուսության պատմողական ժանրերը և դրանց սյուժետային զարգացումները, էջ 165-179:
5. Մատիկյան Հ.Հ., Կարսի և Շիրակի աշխատանքային ու սիրո երգերի համեմատական քննություն, էջ 180-191:
6. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Աջ ձեռքը որպես բժշկության և հոգևոր զորության խորհրդանիշ հայկական մշակույթում, էջ 63-67:

**Հոդվածները հրատարակվել են «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ միջազգային գիտաժողովի (Գյումրի, 26-27 սեպտեմբերի) նյութերի ժողովածուում, Գյումրի, 2025, 376 էջ:**

1. Ակոպով Ա.Ա., Հայրապետյան Ա.Ս., Պատմական Տայքը 16-18-րդ դարերի օսմանյան հարկացուցակներում, էջ 43-47:
2. Այվազյան Գ.Ս., Հայ պարբերականների վերնագրերի գաղափարախոսական կառուցվածքը և դրանց ազդեցությունը հասարակական գիտակցության վրա (1840-1870-ական թթ.), 2025, էջ 49-53:
3. Աուչելլի Ֆ.Կ., Նահատակյան Դ.Ս, Տայքի փայտի ճարտարապետության հիմնական լուծումները եվ զուգահեռները, էջ 301-305:
4. Ավագյան Ի.Է., «Սև ամրոցում» հնագիտական հուշարձանում պեղված ծիսական արձանիկների շուրջ, էջ 10-13:
5. **Բոյաջյան Ա.Գ**., Ավետիսյան Ռ.Գ., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական դրությունը (1970-1988 թթ.), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր, էջ 66-71:
6. Բոյաջյան Ա.Գ., Էթնոժողովրդագրական գործընթացները Հարավային Կովկասի քաղաքներում 1886–1916 թթ., էջ 62-66:
7. Գալստյան Հ.Հ., Ժողովրդական խաղիկների ընդհանուր նկարագիրն ու անվանումները, էջ 209-212:
8. Գրիգորյան Ա.Հ., Նահատակյան Դ.Ս., Գրիգորյան Ա.Ա., Տայքի նահանգի Բողխա և Ոքաղե գավառների տարածաշինական հիմնական սկզբունքները և զուգահեռները, էջ 312-318:
9. Հայրապետյան Ա.Ս., Ադամյան Ն.Ս., Դրվագներ բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների համագործակցության պատմությունից, էջ 83-87:
10. Հայրապետյան Ս.Ա., Թարգմանության համարժեքության մասին, էջ 273-277:
11. Հովհաննիսյան Ռ.Պ., Գյումրու կերպարի կերտման չափումները արդի հայ գրականության կենսափիլիսոփայության ծիրում, էջ 281-285:
12. Մատիկյան Հ.Հ., Կարսի և Շիրակի քնարական բանահյուսության համեմատական քննություն, էջ 248-252:
13. Մատիկյան Հ.Հ., Հարությունյան Հ.Հ., Բանաձևային մտածողության առանձնահատկությունները Շիրակի խաղիկներում, էջ 245-248:

14. Մկրտչյան Լ.Ա., Դավթյան Ռ.Հ., Վարդանյան Բ.Վ., Թադևոսյան Ա.Տ., Խանջյան գյուղի ծիսապաշտամունքային համալիրը, էջ 17–21:
15. Նահատակյան Դ.Ս,, Ակոպով Ա.Ա., Նուրբեկյան Գ.Վ, Տայքի նահանգի Բողխա և Ոքաղե գավառների տարածաշինական հիմնական սկզբունքները և զուգահեռները, էջ 337-340:
16. Պետրոսյան Լ.Ս, Քննարկումներ հին Հայաստանի և Առաջավոր Ասիայի քրմական հաստատությունների վերաբերյալ, էջ 110-114:
17. Պետրոսյան Ս.Գ, Երկու Պակտյուիկեների մասին Հերոդոտոսի հաղորդման շուրջ, էջ 114-118:
18. Ռայնհոլդ Ս.Ջ., **Վարդանյան Բ.Վ**., Մարիաշկ Դ.Վ., Սարիբեկյան Մ.Գ., Լավ նախանշա՞ն. Լեռնակերտի ուշբրոնզեդարյան մի դամբարան, որը կապված է գուշակության ծիսական պրակտիկաների հետ, էջ 22–25:
19. Սահակյան Կ.Ա., Գյումրու կերպարը և սոցիալ-մշակութային անավարտության խնդիրը բանավոր պատումներում, էջ 261-265:

**ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

**Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ա. Ակոպով**

**6.-**

**ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն**
**Տնօրեն՝ պ. գ. թ., դոցենտ Ա.Ս. Հայրապետյան,**
**Գիտքարտուղար՝ պ. գ. թ. Ա.Ա. Ակոպով,**
**Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru,**
**Կայքէջեր՝ shirakcenter.sci.am, shiraksciworks.sci.am**

**7. –-**
**8.** —

9. **Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ՝ նշելով համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները**

ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՃՇԱՀ-ի, ՎՊՀ-ի, ՇՊՀ-ի, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի, ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի հայագիտական ամբիոնների, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան հին ձեռագրերի ինստիտուտի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտի, Հայոց ազգագրության, Հայաստանի պատմության ազգային, Շիրակի երկրագիտական և Գյումրու ժողովրդական ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

Համատեղողների թիվը՝ 5 (ՇՊՀ), 1 (ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ), 3 (ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ), 1 (ՀՊՄՀ), 1 (ՃՇՀԱՀ), 1 (ՊԱԹՊՄՊ ծառայություն), 1 («Կումայրի» արգելոց-թանգարան), 2 (ԳԱԱ ՀԱԻ), 1 (ՎՊՀ):

2025 թ. եղել են 17 համատեղ հրապարակումներ. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ (10), ՀՀ ԳԱԱ ՊԻ (2), ՇՊՀ (3), ՃՇՀԱՀ (2):

**10**. —

**ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան**

**Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ա. Ակոպով**

**Աղյուսակ 1**

**2025թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ**

| № | Կազմակերպությունը | Թեմաների կամ պայմանագրերի թիվը ( n) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Նպատակային ֆինանսավորում | Բազային ֆինանսավորում | Գիտկոմից ստացված այլ ֆինանսավորում | Տնտ.պայմանագրեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ | | 1-36/23-1SRCAS **65603.2** | 25RG-6A091 25RG-6E161 25RG-6B114 **17525.7** | |

**Աղյուսակ 2**

**Աղյուսակ 3**

**Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումներ**

| № | Միջոցառման անվանումը | Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները | Մասնակիցների թիվը | |
|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում՝ արտ. երկրներից |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | «Երիտասարդ հնագետների միջազգային 3-րդ ամառային դպրոց» | Գյումրի-Ջրաձոր, 14-19 հուլիսի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն | 25 | 11 |
| 2. | «Ազգագրական-բանագիտական ընթերցումներ», հանրապետական 5-րդ գիտաժողով | Գյումրի, 15 օգոստոսի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն | 17 | |
| 3. | «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ միջազգային գիտաժողով | Գյումրի, 26-27 սեպտեմբերի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն | 89 | 21 |

**Աղյուսակ 4**

**Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումներ**

| № | Կազմակերպությունը | Երկիրը | Գործուղված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովներին մասնակցելու | Համատեղ գիտական աշխատանք կատարելու | Բանակցությունների և քննարկումների համար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ | Վրաստան | 3 | | |
| | | Ավստրիա | 2 | | |
| | | Թուրքիա | | 2 | |
| | | Իտալիա | 1 | | |

**Աղյուսակ 5**

**Կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելություն**

| № | Կազմակերպությունը | Երկիրը | Ընդունված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովներին մասնակցելու | Համատեղ գիտական աշխատանք կատարելու | Բանակցությունների և քննարկումների համար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ | Ֆրանսիա | --- | --- | 3 |
| | | Գերմանիա | 4 | 5 | 2 |
| | | Ռումինիա | 1 | --- | --- |
| | | Ավստրիա | 1 | 1 | --- |
| | | Իտալիա | 1 | 1 | --- |
| | | ՌԴ | 6 | 7 | 5 |
| | | ԱՄՆ | 1 | 5 | 3 |
| | | Բելառուս | 3 | --- | 3 |
| | | Վրաստան | 4 | 6 | 3 |

**Աղյուսակ 6**

**Աղյուսակ 7**

**ԳԱԱ գիտաշխատողների 2025թ. հրապարակումների ընդհանուր քանակը**

| № | Կազմակերպությունը | Մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, գրքեր | | Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ | | Հոդվածներ գրախոսվող ամսագրերում | | Հոդվածներ գիտաժողովների նյութերի ժողովածուներում | | Թեզիսներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրապետ. | Արտասահմ. | Հանրապետ. | Արտասահմ. | Ընդամենը | Scopus/WoS | Հանրապետ. | Արտասահմ. | Հանրապետ. | Արտասահմ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | «ՀՀ ԳԱԱ Շիրակի | 7 | 0 | 0 | 0 | 48 | 8 | 19 | 2 | 74 | 11 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հայագիտական հետազոտություն-ների կենտրոն» ՊՈԱԿ | | | | | | | | | | |

**Աղյուսակ 8**

**Աղյուսակ 9**

**Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2026թ.**

| № | Կազմակեր-պությունը | Աշխատողնե-րի ընդհանուր թիվը | Գիտական աշ-խատողների ընդհանուր թիվը | ՀՀ ԳԱԱ ակադեմի-կոսներ | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ | Գիտության դոկտորներ | Գիտության թեկնածուներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | «ՀՀ ԳԱԱ Շի-րակի հա-յագիտական հետազո-տությունների կենտրոն» ՊՈԱԿ | 32 | 29 | | | 2 | 16 |

**Աղյուսակ 10**